

**ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇ
ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մերի Արամայիսի Արզումանյան

ՀԵՀ, Լեզուների ամբիոն
mery.arzumanyan@yandex.ru

Ամփոփագիր

Թուրքերենը լեզուների համաշխարհային դասակարգման մեջ ընդգրկված է ուրալ-ալթայական լեզվաընտանիքի ալթայական ճյուղում: Ուրալ-ալթայական լեզվաընտանիքի լեզուների վերաբերյալ կատարված խորքային ուսումնասիրությունները գնալով ավելի ու ավելի են ապացուցում, որ այս երկու լեզվախմբերի՝ մեկ լեզվաընտանիքի մեջ միավորելու համար բավարար հիմքեր չկան: Այդ պատճառով երբեմն թուրքերենը դասակարգվում է որպես ալթայական լեզու: Ժամանակակից թուրքերենն ունի իրեն բնորոշ լեզվական, քերականական առանձնահատկությունները, որոնք անընդհատ ուսումնասիրվում են՝ հաշվի առնելով լեզվում մի քանի գոյավիճակների, նաև բարբառների միաձուլումը:

Հայտնի է, որ շարահյուսությունը համարվում է քերականության երկու հիմնական բաժիններից մեկը, որն ուսումնասիրում է բառերի գործառական կիրառությունները, նրանց կապակցությունները, նախադասությունները, սրանց կառուցվածքային տիպերը և կապը միմյանց հետ: Քերականագիտության մեջ նախադասությունները դիտվել են որպես բառակապակցությունների առանձին տեսակ: Սակայն, հետագայում նախադասություններն ու բառակապակցություններն առանձնացվել են: Այս դեպքում ևս մասնագետների զգալի մասը շարահյուսությունը համարել է բառակապակցությունների ու նախադասությունների ուսմունք:

Նախադասության անդամները, քերականական զանազան կապերի մեջ լինելով, բաղադրում են նախադասությունը և այդպիսով մասնակցում համապատասխան մտքի ձևավորմանն ու հաղորդմանը: Բառակապակցություններն ավելի մեծ միավորներ են, քան նախադասության անդամները, որովհետև երկու կամ ավելի լիմաստ բառերի անդամազարգուցակցումներ են, լրացում-լրացյալ միություններ, որտեղ կա կախման հարաբերություն, գլխավոր բառը գերադաս է, մյուսը՝ ստորադաս, կախյալ, և նրանցից յուրաքանչյուրը նախադասության առանձին անդամ է: Որոշ դեպքերում նախադասության անդամները կարող են արտահայտվել ամբողջական բառակապակցություններով:

Դիտարկել ենք թուրքերենի շարահյուսական կաղապարների առանձնահատկությունները՝ ուսումնասիրության առնելով լեզվի բառակապակցության տեսակները, նախադասության տեսակներն ու խմբերը:

Հիմնաբառեր. Թուրքերեն, «Ստամբուլի թուրքերենը», Շարահյուսություն, Բառակապակցություն, Նախադասություն

Ներածություն

Ժամանակակից թուրքերենի հիմքում Ստամբուլի խոսվածքն է: «Ստամբուլի թուրքե-

րենը» («İstanbul Türkçesi») գրավոր և խոսակցական թուրքերենի այն օրինակն է, ինչպես առաջարկում էին Զիյա Գյոքալփը, Օմեր Սեյ-

Ֆեդդինը և այլք: Մի շարք բարբառներ գոյություն ունեն 1930-ական թվականներից սկսած թուրքական զանգվածային լրատվամիջոցների և կրթական համակարգի կողմից բարբառների կարգավորման (որոշակի բարբառների՝ միմյանց ձուլման, միախառնման գործընթաց, որը հաճախ ուղեկցվում է լեզվի ստանդարտացմամբ) շնորհիվ [Гениш, 77]: Ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունում այսօր էլ կիրառելի են մի շարք բարբառային խոսույթներ, որոնք բաժանված են տարբեր խմբերի՝ համաձայն իրենց ծագման ու առանձնահատկությունների: Գիտական շրջանակներում թուրք ուսումնասիրողները թուրքական բարբառները ընդունում են որպես բերանացի խոսք (*ağız*) կամ ճյուղ (*sive*)՝ առաջնորդվելով անորոշ լեզվական ակցենտով: Թուրքական բարբառները ուսումնասիրելու ծրագրեր են իրականացվում մի քանի համալսարաններում: Թուրքական լեզվաբանական ընկերությունը նույնպես նվիրվել է այս գործին: Աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են և նախատեսվում է կազմել և հրատարակել թուրքական բարբառների համապարփակ ատլաս:

Թուրքերենը կցական լեզու, որը հարուստ է բազմաթիվ վերջածանցներով, որոնց շնորհիվ որևէ հիմքից կարելի է գրեթե անվերջ քանակությամբ նոր բառեր ստանալ: Թուրքիայի թուրքերենին բնորոշ վերջածանցները մասամբ ընդհանուր են նաև մյուս թուրքական լեզուների համար [Sevan Nişanyan, Sözlerin Soyağacı, EK I: Türkçe Yapım Ekleri]: Լեզվի շարահյուսության կանոնակարգման համար մեծ արժեք ունեցավ լեզվի գրի արդիականացումը, այն է՝ նոր այբուբենի պատրաստումն ու թուրքերենի հնչյուններին համապատասխան փոփոխությունների իրականացումը: Այժմ թուրքերենն ունի իր հնչյուններին համապատասխան այբուբեն, գրվում է այնպես ինչպես արտասանվում է, ունի ամեն մի տառին հա-

մապատասխանում է մի հնչյուն [<https://books.google.am/books?id=-DbJAWAAQBAJ&pg=PA12#v=onepage&q&f=false> «Turkish: An Essential Grammar»]:

Գիտական հոդվածի նպատակը: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել թուրքերենի շարահյուսությունն ու դրա առանձնահատկությունները: **Հոդվածի համար սահմանված խնդիրները:**

- Թուրքերենի շարահյուսական միավորների՝ նախադասության անդամների, բառակապակցությունների, նախադասությունների քերականական առանձնահատկությունների վերհանումը:
- Բառակապակցության տեսակների քննությունը:
- Նախադասության տեսակների ու դրանց կապակցման եղանակների քննությունը:

Գիտական հոդվածի մեթոդաբանական հիմքը: Կիրառվել են ինչպես ընդհանուր մեթոդներ՝ տրամաբանական, վերլուծական, այնպես էլ հատուկ մեթոդներ, ինչպիսիք են՝ համակարգակառուցվածքային, մեկնաբանման:

1. Թուրքերենի շարահյուսությունը

Շարահյուսության հիմնական խնդիրը, այդպիսով, լեզվի շարահյուսական միավորների և դրանք պայմանավորող քերականական հարաբերությունների քննությունն է: Այդ միավորներն են՝ նախադասության անդամները՝ բառակապակցությունները և նախադասությունները: Բառակապակցությունը թուրքերեն լեզվի՝ երկու կամ ավելի բառերից կազմված ինքնուրույն շարահյուսական միավորն է, որն արտահայտում է անդամազատ, բայց ամբողջական հասկացություն [Гениш, 81]:

Բառակապակցությունները կազմվում են խոսքի մասերի կապակցելիության օրենքներով: Դրանք լինում են երկու տեսակ՝ ազատ և կայուն: Ազատ բառակապակցությունների

մեջ բառերից մեկը հանդես է գալիս որպես անդամ՝ լրացյալ: Ըստ կազմության բառակապացությունները լինում են երկանդամ և բազմանդամ: Բառակապակցությունը միաբառ լինել չի կարող, այն կազմված է լինում երկու կամ ավելի բառերից:

Թուրքերենի լեզվաբանության մեջ նախադասությունը շարահյուսական միավոր է, որը ձևավորում է ամփոփ միտք և ունի հնչերանգային ավարտվածություն: Նախադասության սկիզբը կամ ավարտը կարող է համընկնել բացարձակ դադարներին, երբ նրանով սկսվում կամ ավարտվում է խոսքը, կարող է և համընկնել շարահյուսական դադարին, որը համեմատաբար ավելի տևական է, քան հնչաբառի (միջբառային) կամ հնչաշարային դադարը:

Նախադասության անդամները, քերականական զանազան կապերի մեջ լինելով, բաղադրում են նախադասությունը և այդպիսով մասնակցում համապատասխան մտքի ձևավորմանն ու հաղորդմանը [Гениш, 94]:

Թուրքերենում պարզ համառոտ նախադասության մեջ նախ դրվում է ենթական, ապա՝ ստորոգյալը: Ներկա ժամանակով

դրված ստորոգյալով պարզ նախադասությունը կազմվում է ստորոգման - *dir* - ածանցի միջոցով, որը կցվում է անվանը: Ստորոգման ածանցը շեշտ չի կրում: Որոշ վերջածանցների դեպքում, ինչպես *-le* «հետ» և բայի ժխտական ածանցը *-me-/-ma-*, շեշտն ընկնում է նրանց նախորդող վանկի վրա՝ *kitáp-la* «գրքով», *dé-me-mek* «չասել»

[<https://www.cambridge.org/core/journals/journal-of-the-international-phonetic-association/article/abs/acoustic-correlates-of-lexical-accent-in-turkish/8d9860db459ef275238d64b946009294> «acoustic correlates of lexical accent in turkish»]: Որոշ դեպքերում (օրինակ, բարդ բառերի երկրորդ մասում կամ, երբ բային նախորդում է անորոշ խնդիր) բառի շեշտը ճնշվում է և չի լսվում:

Համաձայն ձայնավորների ներդաշնակության կանոնի, կախված ստորոգյալի անվանական բաղադրիչի վերջին վանկի ձայնավորից՝ ածանցի ձայնավորը կարող է ունենալ հնչյունական չորս տարբերակ՝ *dir, d4r, dur, d2r*: Ստորոգման ածանցի ձայնավորի կախվածությունը անվան վերջին վանկի ձայնավորից:

Աղյուսակ 1

Անվան վերջին վանկի ձայնավորը	Ստորոգման ածանցի ձայնավորը	3-րդ դեմքի ստորոգման ածանցը
a, 1	1	dir
e, i	i	dir
o, u	u	dur
ö, ü	ü	dür

Թուրքերենի ստորոգման ածանցի ձայնավորի կախվածությունը անվան վերջին վանկի ձայնավորից

Պարզ նախադասության հարցական ձևը կազմվում է «*mi*» հարցական մասնիկի միջոցով: Հարցական մասնիկը շեշտ չի կրում: Ենթարկվելով ձայնավորների ներդաշնակության կանոնին՝ հարցական մասնիկը կարող է ունենալ հնչյունական չորս տարբերակ՝ *mi,*

mi, mu, mü: Մասնիկը չի գրվում այն բառի հետ միասին, որին վերագրվում է, սակայն արտաբերվում է միասին: Ստորոգման «*dir*» ածանցը կցվում է հարցական մասնիկին:

Նախադասությունների կապակցություններն ուսումնասիրվում են ըստ նրանց բարդ

տիպերի մեջ մտնող պարզ նախադասությունների հարաբերությունների, որոնք ընդհանուր առմամբ լինում են համադասական և ստորադասական՝ կապակցման համապատասխան միջոցներով ու եղանակներով: Արդի շարահյուսագիտության մեջ նոր են շարահյուսական հոմանիշների, շարահյուսական հարացույցների, բնագրի շարահուսության գաղափարները:

Թուրքերեն շարահյուսության մեջ նախադասության անդամները, լինելով քերականական զանազան կապերի մեջ, զուգորդվում են նախադասությանը և այդպիսով մասնակցում համապատասխան մտքի ձևավորմանն ու հաղորդմանը [Дудина, 94]:

Բառակապակցություններն ավելի մեծ միավորներ են, քան նախադասության անդամները, որովհետև երկու կամ ավելի լիմաստ բառերի անդամազատ զուգակցումներ

են, լրացում-լրացյալ միություններ, որտեղ կա կախման հարաբերություն, գլխավոր բառը գերադաս է, մյուսը՝ ստորադաս, կախյալ, և նրանցից յուրաքանչյուրը նախադասության առանձին անդամ է: Բայց որոշ դեպքերում նախադասության անդամները կարող են արտահայտվել ամբողջական բառակապակցություններով, ինչպես նաև հիմնական ու սպասարկու բառերի զուգակցությամբ:

2. Նախադասությունների խմբեր

Թուրքերենում կան նախադասությունների երկու խմբեր՝ բայական և անվանական: Ներքորբերյալ բայական նախադասության օրինակում ստորոգյալը սահմանական բայ է, մինչդեռ անվանական նախադասությունում պետք է ունենա կամ ոչ բացահայտ բայ, կամ կապող բայ՝ *ol* կամ *-y-* («լինել» բայի տարբերակներն են):

Աղյուսակ 2

Նախադասության տեսակներ	Թուրքերեն		Հայերեն
	Ենթակա	Ստորոգյալ	
Բայական	Necla	okula gitti	Նեջլան գնաց դպրոց:
Անվանական (առանց բայի)	Necla	oğretmen	Նեջլան ուսուցիչ է:
Կապող բայով	Necla	ev-de-y-miş (գծիկները ուրվագծում են վերջածանցները)	Հավանաբար Նեջլան տանն է:

Նախադասության խմբերը թուրքերենում

Ժխտում

Նախադասության երկու տիպերը ունեն ժխտման տարբեր ձևեր: Անվանական նախադասության ժխտումը կատարվում է *değil* բառի ավելացմամբ: Օրինակ, վերևի նախադասության ժխտականը կլինի հետևյալ կերպ *Necla öğretmen değil* (Նեջլան ուսուցիչ չէ) [Дудина, 101]: Բերենք ևս մի քանի օրինակ՝ *Bu oda değildir- Uu սենյակ չէ* կամ *O kutu değildir- Այն տուփ չէ*:

Հարցական նախադասություն

Բայական նախադասությունը պահանջում է բային ժխտական վերջածանցի՝ *-me-*ի հավելում (այն դրվում է բայարմատից հետո և ժամանակ ցույց տվող ածանցից առաջ): *Necla okula gitmedi* (Նեջլան չգնաց դպրոց):

Բայական նախադասություններում *-mi* հարցական ձևույթը առանց որևէ այլ մասնիկի դրվում է նախադասության վերջում՝ *Necla okula gitti mi?* (Նեջլան գնա՞ց դպրոց): Անվա-

նական նախադասություններում *-mi*-ն դրվում է ստորոգյալից հետո, բայց նախքան անձնական վերջածանցը՝ *Necla, siz öğretmen misiniz?* (Նեջլա՛, դուք ուսուցի՛չ եք): Բերենք հարցական նախադասությունների ևս մի քանի օրինակ՝ *Bu oda midir?- Uu sünjü'ly է, O kapı midir?- Ujn դու'ն է, O Rus nudur?- Uu nnu'ü է, Ahmet kimdir?- Uhdetün n'ü է, Bu nedir?- Uu h'üz է:*

Թուրքերենում պարզ համառոտ նախադասության մեջ ենթական սովորաբար դրվում է սկզբում, իսկ ստորոգյալը՝ վերջում: Օրինակ՝ *Ben iyiyim- Ես լավ եմ կամ Çocuklar oynadılar-Երեխաները խաղացին:* Պարզ ընդարձակ նախադասության պարագայում շարահատությունն այսպիսինն է՝ ենթակա, ստորոգյալ, լրացում: Դիտարկենք օրինակներ՝

Kaan tiyatrodan geliyor- Քաանը գալիս է թատրոնից:

Çocuklar okula gidiyorlar - Երեխաները գնում են դպրոց:

Öğretmen derse başlıyor - Ուսուցիչը սկսում է դասը:

Öğrenci lokantayagidiyor - Աշակերտները գնում են ճաշարան:

Ինչպես նշեցինք, թուրքերենում նախադասության մեջ սովորաբար ենթական դրվում է ստորոգյալից առաջ: Խնդիրը դրվում է ստորոգյալից առաջ: Բացառական հոլովով դրված խնդիրը նախորդում է տրական հոլովով դրված խնդրին, իսկ ահա ուղիղ խնդիրը հաջորդում է անուղղակի խնդրին: Ժամանակի ու տեղի պարագաները դրվում են ենթակայից առաջ կամ անմիջապես նրանից հետո: Գոյականական անդամի լրացումներն էլ նախորդում են գոյականին, ենթակայի լրացումները դրվում են ենթակայից առաջ, իսկ խնդրի լրացումները՝ խնդրից առաջ: Մակբայներն ու ածականները՝ որպես նախադասության պարագայական անդամներ, տեղակայված են ստորոգյալից առաջ: Օրինակ՝ *Bu*

sabah gee uyandım-Այս առավոտ ուշ արթնացա կամ

Ben mektubuna hemem cevap verdim - Ես քո նամակին անմիջապես պատասխանեցի: Այնուամենայնիվ, նախադասությունների ավանդական շարահատությունը կարող է փոփոխվել: Նախադասության այն անդամը, որը շեշտ է կրում, նախորդում է ստորոգյալին: Օրինակ՝ *Aram otomobllle sinemaya düün geldi-Urամն ավտոմեքենայով կինոթատրոն երեկ եկավ:* Նախադասության անդամների շարահատության արահատության փոփոխությունը հիմնականում կապված է տրամաբանական շեշտի հետ: Շրջուն շարահատությամբ նախադասությունները կիրառվում են նաև բանավոր խոսքում, երբ շեշտակիր բառը ստորոգյալի հետ դրվում է նախադասության սկզբում, իսկ շեշտ չկրող բառն անցնում է հետ:

Եզրակացություն

Ուսումնասիրությունների արդյունքում հարկ ենք համարում նշել, որ շարահատության հիմնական խնդիրը, այդպիսով, լեզվի շարահյուսական միավորների և դրանք պայմանավորող քերականական հարաբերությունների քննությունն է: Այդ միավորներն են՝ նախադասության անդամները՝ բառակապակցությունները և նախադասությունները:

Բառակապակցությունները կազմվում են խոսքի մասերի կապակցելիության օրենքներով: Դրանք լինում են երկու տեսակ՝ ազատ և կայուն: Ազատ բառակապակցությունների մեջ բառերից մեկը հանդես է գալիս որպես անդամ՝ լրացյալ:

Թուրքերենի լեզվաբանության մեջ նախադասությունը շարահյուսական միավոր է, որը ձևավորում է ամփոփ միտք և ունի հնչերանգային ավարտվածություն: Դիտարկում ենք նախադասության երկու խմբեր՝ բայական և անվանական, որոնք ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները:

Օգրագրորժված գրականության ցանկ

1. Гениш Э., Современный турецкий язык: Практический курс. Начальный уровень А (А1 + А2). Ключи ко всем упражнениям и тестам. Турецко-русский словарь (5000 слов) / Э. Гениш, А.О. Шенол, К. Фурат. М.: Ленанд, 2019.
2. Дудина Л.Н., Турецкий язык: Практический курс / Л.Н. Дудина. М.: Ленанд, 2014.
3. Sevan Nişanyan, Sözlerin Soyağacı, EK I: Türkçe Yapım Ekleri
4. <https://books.google.am/books?id=-DbJAwAAQBAJ&pg=PA12#v=onepage&q&f=false> «Turkish: An Essential Grammar»:
5. <https://www.cambridge.org/core/journals/journal-of-the-international-phonetic-association/article/abs/acoustic-correlates-of-lexical-accent-in-turkish/8d9860db459ef275238d64b946009294> «Acoustic correlates of lexical accent in turkish»:

CHARACTERISTIC MEASURES OF THE TURKISH LANGUAGE FLUIDITY

Meri Arzumanyan

EUA, Chair of languages

mery.arzumanyan@yandex.ru

Abstract

The Turkish language is included in the Altaic branch of the Ural-Altaic language family in the world classification of languages. The in-depth studies conducted on the languages of the Ural-Altaic language family prove more and more that there are no sufficient grounds for uniting these two language groups into one language family. For this reason, sometimes the Turkish language is classified as an Altaic language. The modern Turkish language has its own linguistic and grammatical features, which are constantly studied, taking into account the fusion of several forms of the language, including dialects.

It is known that conjugation is considered one of the two main divisions of grammar, which lists the functional uses of words, their conjunctions, prepositions, their structural types, and their relation to each other. In grammar, sentences were considered as a separate type of idioms. However, later sentences and phrases were separated. In this case too, a significant number of specialists considered composition to be the teaching of phrases and sentences.

The members of the sentence, being in various grammatical connections, compose the sentence and thus participate in the formation and communication of the corresponding thought.

Phrases are larger units than the members of a sentence, because they are disjointed combinations of two or more full-meaning words, complement-complementary unions, where there is a relationship of dependence, the main word is superior, the other is subordinate, dependent, and each of them is a separate member of the sentence.

In some cases, the members of a sentence can be expressed as complete phrases.

We have considered the peculiarities of the syntactic patterns of the Turkish language, taking into account the types of phrases, sentence types and groups of the language.

Keywords: turkish, «the turkish language of Stambul», continuity, idiom, preposition.

Ներկայացվել է՝ 01.10.2022թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 04.11.2022թ.